ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի նոյեմբերի 12-14-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն.
Գեորգի Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. Գործուղման վայրը / ժամկետները.
Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Հանովեր, Բոխհոլտ), 2018 թվականի նոյեմբերի 12-14-ը

4. Հրավիրող կողմը.
«Քեյսլի» միջազգային ընկերություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Մասնակցություն «Եվրո Թիր» ամենամյա միջազգային էքսպո ցուցահանդեսին, այցելություն «Քեյսլի» միջազգային ընկերություն

6. Քննարկված թեմաները.
   - ✓ Խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման աշխատանքների իրականացում, ականջապիտակների գործնական կիրառում
   - ✓ Խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման վերաբերյալ փորձի փոխանակում
   - ✓ Միջազգային կազմակերպությունների կողմից ծրագրին աջակցության հնարավորությունները
   - ✓ Հայաստանի Հանրապետությունում ծրագրի ներդրման խնդիրներն ու առանձնահատկությունները
   - ✓ Նախնական պայմանավորվածություն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման և գնի վերաբերյալ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Հանդիպման շրջանակներում, հրավիրող կողմի նախաձեռնությամբ

իրականացվել է այց քաղաք Հանովեր՝ ամենամյա միջազգային էքսպո ցուցահանդեսին մասնակցելու նպատակով: Ցուցահանդեսի շրջանակներում ուսումնասիրվել են ականջապիտակներ արտադրող այլ ընկերությունների, ինչպես նաև անասնաբուժության ոլորտին վերաբերող այլ գյուղատնտեսական արտադրանքներ՝ հետագա համագործակցության նպատակով:
Իրականացվել է այցելություն «Քեյսլի» միջազգային ընկերության արտադրամաս, որտեղ ուսումնասիրվել է արտադրության ողջ գործընթացը: Քննարկվել են այս ոլորտում հետագա համագործակցության, ինչպես նաև, ընկերության կողմից արտադրվող խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման սարքավորումների կիրառման հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել գործընթացը՝ խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման գործընթացն իրականացնելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
Շարունակել խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման ծրագրի ներդրմանն ուղղված աշխատանքները՝ ծրագիրն ամբողջությամբ ներդնելու,իրականացնելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

19 նոյեմբեր 2018թ.